10.57192/18291864-2024.2-3

ԿՈԳՆԻՏԻՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾԻՔՆԵՐՆ ՈՒ ԹԻՐԱԽՆԵՐԸ*

Բանալի բառեր – կոգնիտիվ պատերազմ գիտելիքներ, իմաստներ, իդեալի և իրականության ողբերգական հակաթեզ, իրական Հայաստանի ու պատմական Հայաստանի հակաթեզ, անփոփոխակ (ինվարիանտ), կենդանի հիշողություն, միջազգային իրավունքի փաստաթղթեր:

Որակական ռեսուրսների՝ մարդկային մտքի ու նորագույն տեխնոլոգիաների ասպարեզում իր հնարավորությունները չօգտագործելու պատճառով 2020-ին ռազմաքաղաքական պարտություն կրած, իսկ 2023-ին Արցախի հայաթափման փաստին մատների արանքով նայած Հայաստանն այսօր հայտնվել է մի նոր մարտահրավերի՝ **կոգնիտիվ պատերազմի**[1] (cognitive warfare) առաջ:

Գլոբալ մրցահարթակներում արձանագրվող այս բարդ երևույթը գործում է ազգերի ու պետությունների մրցակցության նոր՝ ուղղահայաց դաշտում՝ վիրտուալ իրականության մեջ: Այստեղ միլիոնավոր մարդկանց մտահոգևոր ոլորտի վրա ազդող տեխնոլոգիաների միջոցով կոգնիտիվ պատերազմի մասնակիցը սեփական թիրախն աստիճանաբար դարձնում է այնպիսին, ինչպիսին ինքն է ցանկանում: Պատճառն ակնհայտ է, **եթե վիրտուալ իրականության մեջ մեր հակառակորդին չենք դարձնում այնպիսին, ինչպիսին մենք ենք պատկերացնում, ապա, վաղ թե ուշ նա մեզ դարձնելու է այնպիսին, ինչպիսին ինքն է ցանկանում**:

Անշուշտ, ներկայումս ծավալվող կոգնիտիվ պատերազմում սեփական շահերը պաշտպանելու նախապայմանը պետականորեն կազմակերպված ազգի անկախությունն է, քանզի ներկա աշխարհակարգում սուբյեկտայնության բացակայությունը ինքնության կորստի ու ամբողջական ոչնչացման ճանապարհ է: Բայց, քանի որ գլոբալացող աշխարհում ընդլայնվել են անկախության անվտանգային բաղադրիչի քաղաքական

*Ընդունվել է տպագրության 30.06.2024:

[1] Տե՛ս https://cyclowiki.org/wiki/%D0%9A%D0%BE%D0%B3%D0%BD%D0%B8%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D0%B0%D1%8F_%D0%B2%D0%BE%D0%B9%D0% BD%D0%B0

ՀՀԻ հանրակրթական հանդես, ԺԶ (ԽԲ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

բովանդակության ընկալումները, ոմանց թվում է, թե Հայաստանի նեղ սահմաններում պարփակվելու պարագայում առկա աշխարհակարգը մեզ ապահովագրելու է արտաքին վտանգներից: Բայց եթե անգամ ներկա գլոբալ ճգնաժամը չհանգեցնի աշխարհակարգի հիմնարար փոփոխությանը, միևնույն է՝ անկախության անվտանգային բաղադրիչը **ստատիկ վիճակում** դիտարկելու պարագայում կարելի է վտանգել անգամ ներկա 29. 742 քառակուսի կիլոմետրանոց Հայաստանը: Կոգնիտիվ պատերազմի հիմնական առանձնահատկությունը վիրտուալ մրցահարթակներում ծավալվող իրադարձությունների **դինամիզմն է**: Տեղեկատվության արագ տարածման պատճառով ֆիզիկական ուժի գործադրման փոխարեն հաճախ բավական են Facebook-ի, Twitter-ի, YouTube-ի կամ Google-ի միջոցով գործադրվող կոգնիտիվ տեխնոլոգիաները: Որովհետև կոգնիտիվ պատերազմի թիրախն առաջին հերթին հակառակորդի **մտածողությունն** է, որին սեփական **գիտելիքներն** ու **իմաստները** պարտադրելու համար սկզբում բավարար է անգամ սովորական վախի ներարկումը՝ իր հանդեպ ֆիզիկական ուժի գործադրման հնարավորության շուրջ:

Խնդիրն այն է, որ կոգնիտիվ պատերազմները ոչ միայն հակառակորդի մտածողությունն ուղղորդող, այլև մթագնող, ոչ միշտ տեսանելի տեխնոլոգիաների կիրառման դաշտեր են: Դրանցում արձանագրվում է անցումը պատերազմների՝ արդեն երրորդ փուլին, այսինքն՝ մարդկային մարմինների **ֆիզիկական բախմանը** հաջորդած՝ 20-րդ դարի տեխնիկական միջոցների (ինքնաթիռ, կամ՝ տանկ) **տարածական բախումները** փոխարինվել են **բանականության ու ստեղծագործ աշխատանքի** ծնունդ նպատակների ու արժեքների անմիջական ու միջնորդավորված պարտադրանքով[2]**:** Կոգնիտիվ պատերազմը սկզբում կարող է այնքան էլ տեսանելի չլինել իր զոհի համար, իսկ երբ վերջինս հասկանա, թե ինչպես է ենթարկվում «մշակման», այլևս կարող է ուշ լինել: Ավելին, լինելով միաժամանակ՝ ինտելեկտի համար ու ինտելեկտի հետ մրցակցության արտահայտություն՝ կոգնիտիվ պատերազմը ծավալվում է միանգամից մի քանի զուգահեռ հարթություններում՝ մտածողության մեջ, հուզական դաշտում և այլն: Ուստիև այսօր այն դեռևս անընկալելի է հիմնականում՝ **միաչափ մտածողություն** ունեցող մեր գիտնականների, առաջին հերթին՝ պատմաբանների մեծ մասի համար:

Դա է պատճառը, որ նրանց կողմից մինչ օրս չի գիտակցվում այն իրողությունը, որ թեև մեր ազգային հիշողությունն ու պատմությունն այս-

[2] Ավելի մանրամասն տե՛ս **Медушевский А. Н.**, Когнитивная война… https://cyberleninka.ru/article/n/kognitivnaya-voyna-sotsialnyy-kontrol-upravlenie-soznaniem-i-instrument-globalnogo-dominirovaniya-chast-1:

օր կոգնիտիվ պատերազմի թիրախներ են, բայց դրանցից առաջինն ավելի սուր ու անմիջական կերպով է պարառում ազգային կեցության պարտադիր պայմանը՝ սերունդների անմիջական՝ հիշողութենական կապը: Ուստի ոչ թե հայոց պատմության, այլ հենց **հիշողության** թիրախավորման խնդիրն է այսօր վերածվել մեր հանրույթի կոտորակման գործիքի: Պատճառն այն է, որ դասագրքային կամ, որ էլ ավելի բարդ է՝ ակադեմիական բնույթի գիտելիքների միջոցով շատ դժվար է արթնացնել որևէ ազգի ինքնապաշտպանական բնազդը. Իսկ սերունդների հիշողության կենդանի շղթայի պահպանման պարագայում, հնարավոր չէ կատարել այնպիսի սխալներ, որոնք կարող են անդառնալի լինել տվյալ երկրի ու ժողովրդի համար: Որպես **ապրված պատմության** վրա հիմնվող՝ ազգային կեցության պրակտիկ փորձի խտացում, մեր հիշողութենական գիտելիքների ողջ համակարգը նորից հայտնվել է **ազատության իդեալի և դաժան իրականության** ողբերգական հակաթեզի առաջ: Բայց մեզանում նվազագույն գիտելիքների բացակայության պատճառով վերջին հազարամյակում մեր ազգային կեցությանն ուղեկցող այս լրջագույն մարտահրավերը 44-օրյա պատերազմից հետո շրջվել ու վերածվել է **իրականության ու իդեալի** բախման, ինչը մատուցվում է որպես **իրական Հայաստանի ու պատմական Հայաստանի** հակաթեզ: Իրականությունը չընմբռնելու կամ նրանից խույս տալու արդյունքում՝ մեր մտահոգևոր դաշտում գործ ունենք ողջ Հայաստանի դեմ տարվող կոգնիտիվ պատերազմի ընդհանուր թիրախից՝ նրա պարզունակ **գործիքների** վերածված անմեղսունակների երկու խմբերի հետ: Նրանք փորձելով մերժել կամ պահպանել մեր **գրքային պատմությունը**, աստիճանաբար իրենք են հայտնվում կոգնիտիվ պատերազմի ծուղակում: Նման պայմաններում պատմական Հայաստանի ընկալումն ընդունում է մի կողմից՝ մաքուր ակադեմիական, իսկ մյուս կողմից պարզունակորեն՝ նիհիլիստական (ժխտական) երանգավորում, որովհետև ներկա իրականությունից անդին միայն այն է, ինչը մեզ համար հիշողություն չէ, այլ **պատմական փաստ**, որը, որպես **ինվարիանտ**, ենթակա չէ վերաքննության: Մինչդեռ, իրականում մեր ազգի քաղաքական գիտակցության խորքում ոչ թե պատմական Հայաստանն է, այլ ընդամենը մի քանի սերունդների հերոսական ու տրավմատիկ, բայց միանգամայն՝ **կենդանի հիշողությունը**: Ժխտել դրա գոյությունը որպես մեր մտքի ու հոգու մեջ ապրող իրական Հայաստանի անմիջական արտացոլում՝ կնշանակի հարցականի տակ դնել մեր ինքնության կրողը հանդիսացող՝ պահանջատեր ազգի գոյության փաստը:

Ավելին՝ միջազգային իրավունքի արդի չափորոշիչներով, իհարկե, տեսականորեն կարելի է վիճարկել սոսկ **պատմական իրավունքի** միջո-

ցով ամրագրվող հավակնությունները, քանզի Մեծ Հայքի այն աշխարհինե-
րը, որոնցում մեր ներկայությունը վաղուց արդեն պատմություն է դարձել,
կարելի է անվանել **պատմական Հայաստանի** մասեր: Բայց դրանցից
1915-ին եղեռնազարկ եղած ազգի կենդանի հիշողության մեջ հնարավո՞ր
է ընդհատել իր պապերի ջերմ ու հյուրընկալ օջախների մասին ռացիոնալ
գիտելիքների ու իռացիոնալ զգացումների կապը՝ դրանց հանդեպ մեր
սեփականության վկայականը հանդիսացող **միջազգային իրավունքի**
այն փաստաթղթերի հետ, որոնք վաղեմության ժամկետ չունեն:

Ի հեծուկս մեր ինքնաոչնչացման գործիքի վերածվող քաղաքական
ածպարարության ու ակադեմիական բթամտության ներկա անպտուղ բա-
նավեճի, իրական Հայաստանը ոչ թե մեզ պարտադրված սահմանային
իրողությունների՝ գնալով փոքրացող շագրենի կաշին է, այլ ազգի կեն-
դանի հիշողության «իրավական գնահատականը»: Այդ հիշողության մեջ
ամրագրված իրողությունները թեև չեն համապատասխանում պատմա-
կան Հայաստանի սահմաններին, բայց միաժամանակ՝ չեն համընկնում
նաև 20-րդ դարասկզբին ազգին պարտադրված քարտեզային իրողու
թյուններին: Իրական Հայաստանը դա այն աշխարհագրական տարածքն է,
որն ազգի կենդանի հիշողությունն ընկալում է որպես հայրենիք, տուն,
օջախ՝ հիմնվելով միջազգային իրավունքի միանգամայն իրական փաս-
տաթղթերի՝ **Հայաստանի արևմտյան սահմանները հստակեցնող ԱՄՆ
նախագահ Վ. Վիլսոնի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի Իրավարար վճռի ու
Հայաստանի արևելյան սահմանները հստակեցնող Ազգերի Լիգայի
համապատասխան հանձնաժողովի՝ 1920 թ. փետրվարի 24-ի որոշման
վրա**:

Այսպիսով՝ իրական Հայաստանը ոչ թե ոտնձգություն է այլոց իրա-
վունքների հանդեպ, այլ միջազգայնորեն ճանաչված սեփական իրավունք-
ներն ամրագրող այն աշխարհագրական տարածքը, որի ընկալման խնդի-
րը ոչ մի կապ չունի՝ մեր հանդեպ այլոց ախորժակների գրգռման վտանգի
հետ: Ընդհակառակը՝ այդ ախորժակներն արհեստականորեն գրգռված
պահելու համար է թուրքական քարոզչությունն անընդհատ խոսում փոք-
րիկ Հայաստանից բխող մեծ վտանգների մասին՝ խուսափելու համար
Հայկական հարցի կարգավորմանը վերաբերվող միջազգային իրավունքի
հայտնի փաստաթղթերից: Դրանց հիշատակումը անգամ Հայաստանի նա-
խորդ՝ ոչ այնքան գրագետ իշխանությունների կողմից էր ներառվել հայ-
թուրքական երկու արձանագրությունների մեջ: Եվ նախկինների կիսագրա-
գիտությանը փոխարինած ներկաների մարտնչող անգրագիտությունը,
չընմբռնելով անգամ հարցի էությունը, կուլ է տալիս կոգնիտիվ պատերազ-

մում անընդհատ մեզ մատուցվող խայծերը՝ դառնալով հակառակորդի քարոզչության գործիքը:

Ազգի կենդանի հիշողության ու միջազգային իրավունքի դաշտում գտնվող հայապատկան տարածքները սոսկ ժամանակավորապես կորսված հողեր են, **ուստիև ոչ ոք իրավունք չունի այս՝ միանգամայն իրական Հայաստանն անվանել պատմական Հայաստան**: Առավել ևս, որ հազարամյակների պատմություն ունեցող մեր ժողովրդի համար, և՛ զգայական և՛ իրավական առումներով, պետության ու հայրենիքի տարբերությունը իրացված ու չիրացված իրավունքների բաղդատման մեջ է: Իրականում պատմականն այն է, ինչը դուրս է մեր զգայարաններից, քանզի մենք կանք, գոյություն ունենք առաջին հերթին հենց դրանց շնորհիվ: Ուստի ներկայումս մեզ ուղղվող՝ Արարատը պատմական դարձնելու Հայաստանի ղեկավարության քողարկված պահանջը պարզապես կոլեկտիվ ինքնասպանության առաջարկ է, որի հանդեպ լուրջ հակազդեցության բացակայությունը չի կարող երկար տևել: Անգամ աշխարհի մեծագույն բռնակալ Ստալինի՝ Ալթայի երկրամաս տեղափոխվելու պահանջին երջանկահիշատակ Գևորգ Չորեքչյան կաթողիկոսը պատասխանել է Արարատը նույնպես Ալթայ տեղափոխելու մասին «նուրբ հումորով»: Արարատը ոչ միայն իրավական առումով է գտնվում Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքում, այլև մեր զգայարանների միջոցով է ընկալելի որպես իրական Հայաստանի խորհրդանիշ: Հարցն այստեղ միայն տեսողական էֆեկտի մեջ չէ, քանզի հանել Արարատը մեր ազգային հիշողությունից ու մշակույթից՝ նշանակում է կենդանի, շնչող ազգի մեջքից քաշել-հանել նրա առողջ ու ամուր ողնաշարը:

Պատմական Հայաստանի և իրական Հայաստանի հակաթեզը ներհայկական դիսկուրսի վերածելու ներկա փորձերը ծառայում են մեր դեմ թուրք-ադրբեջանական տանդեմի սանձազերծած կոգնիտիվ պատերազմի **առաջին հանգրվանի** նպատակների սպասարկմանը: Դրանից հետո պատրաստ կլինի **երկրորդ հանգրվանի** թիրախային նպատակը՝ Հայաստանի մնացորդացի խաղաղ կլանմամբ՝ «Արևմտյան Ադրբեջանի» ձևավորման ծրագիրը, քանզի ազգային ինքնության խորհրդանիշից հրաժարվողները միայն կարող են հանդուրժել բորենիների վերադարձը:

Այսպիսով՝ ազգի կենդանի հիշողության վրա հիմնվող անժամանցելի իրավունքների անգրագետ ու ապաշնորհ **պատմականացումը** կամ դրանցից **հրաժարումը** վերածվել է արտաքին դաշտերից մեզ պարտադրվող երկու կեղծ ինքնությունների բախման: Մինչդեռ՝ թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից մեր դեմ ծավալվող կոգնիտիվ պատերազմն ունի ընդամենը մեկ թիրախ՝ Հայաստանը, որի **քաղաքական միասնու-**

թյան հիմքը ոչ թե գրքային պատմությունն է, այլ սերունդների կենդանի հիշողությունն ու ազգի անժամանցելի իրավունքները:

Եզրակացություն. Հայաստանի ու հայության իրավունքների դիտարկումը սոսկ պատմական հարթության վրա սովորական ակադեմիական բթամտություն է, իսկ Ադրբեջանի ու Թուրքիայի անվերջանալի պահանջներն ու ոտնձգությունները «իրական Հայաստանի» խրտվիլակով քողարկելու փորձերը՝ մեր աչքի առաջ շարունակվող Հայոց ցեղասպանության հետ հաշտվելու մտադրության (ինտենտի) արտահայտություն:

Խմբ:

THE TOOLS AND TARGETS OF COGNITIVE WARFARE

Key words- cognitive warfare knowledge, meanings, tragic antithesis of the ideal and reality, antithesis of real Armenia and historical Armenia, invariant, live memory, documents of international law.

Edit.

ИНСТРУМЕНТЫ И ЦЕЛИ КОГНИТИВНОЙ ВОЙНЫ

Ключевые слова - когнитивная война, знания, смыслы, трагический антитезис идеала и реальности, антитезис реальной Армении и исторической Армении, неизменяемый (инвариант), живая память, документы международного права.

Ред.:

Օգտագործված գրականություն

1. https://cyclowiki.org/wiki/%D0%9A%D0%BE%D0%B3%D0%BD%D0%B8%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D0%B0%D1%8F_%D0%B2%D0%BE%D0%B9%D0%BD%D0%B0
2. **Медушевский А. Н.**, Когнитивная война… https://cyberleninka.ru/article/n/kognitivnaya-voyna-sotsialnyy-kontrol-upravlenie-soznaniem-i-instrument-globalnogo-dominirovaniya-chast-1:

REFERENCES

Medushevskij A. N., Kognitivnaja vojna… https://cyberleninka.ru/article/n/kognitivnaya-voyna-sotsialnyy-kontrol-upravlenie-soznaniem-i-instrument-globalnogo-dominirovaniya-chast-1: